Օճունի յուշարձանի պարզաքանդակնե-
րից, երկբաշխականի հետ, ուշագրաւ է
չուշանաձադիկը, յաճախ կրկնուած, որ տե-
սանք նաեւ Պտղավանքի լուսամուտներից մէ-
կի պսակի մէջ, եւ պիտի տեսնենք այլուր:

երբ բազիլիկ եւ տեղական-իրանական ոճերն
սկսած են միանալ, բայց այն չըջանի, երբ
գերակշռող է դեռեւս բազիլիկ ոճը միու-
թեան գործադրութեան մէջ, ուրեմն եւ աւելի
նախնական, քան Պտղավանքը Զ. դարի առա-



Պատկ. 49

Այս բոլորից յետոյ, առանց տատանուե-
լու եզրակացնել կարող ենք, թէ յուշարձանը
եւ տաճարը մօտաւորապէս նոյն ժամանակի
եւ գեղարուեստական հոսանքի գործեր են,

ջին կիսի, առաւել եւս հին, քան Գայիա-
նէն 630-ական, Մրենը 640-ական եւ Արուճը
660-ական թուականներին:

* * *